

ՀՆՁՅՈՒՆԱՓՈԽԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
ՖՐԻԿԻ ՏԱՂԵՐՈՒՄ

Միջնադարյան հայ գրականության առեղծվածային դեմքերից մեկի՝ Ֆրիկի մասին ճշգրիտ կենսագրական տվյալներ չեն պահպանվել, սակայն նրա տաղերի լեզվի բնությունը կարող է որոշ պարզաբանումներ մտցնել ինչպես նրա բնակության վայրի, այնպես էլ լեզվի տարածքային տարբերակի վերաբերյալ:

Ֆրիկը, ձգտելով հասկանալի լինել բոլորին, առավելապես նախընտրել է դյուրըմբռնելի, պարզ խոսքը՝ *Ֆրիկն հանց պարզ է խաւսել, որ ամենայն մարդ իմանայ* (ՖրԴ, 296):

Հեղինակային հիշյալ վկայությունը նկատի ունենալով՝ կարող ենք ասել (իհարկե, վերապահությամբ), որ վերջինս, պարզ *խաւսելով*, հաճախ նախապատվությունը տվել է լեզվի՝ ժամանակի խոսակցական տարբերակին՝ բարբառին:

Միջինհայերենյան բարբառների մասնակի ուրվապատկերման հիման վրա կարող ենք որոշ պարզաբանումներ մտցնել Ֆրիկի բնակության վայրի և լեզվի տարածքային տարբերակի վերաբերյալ:

Անդրադառնա՞նք Ֆրիկի բառամթերքին հատուկ հնչյունափոխական (առավելաբար ծայնավորների) առանձնահատկություններին՝ օգտագործելով Դիւանի (նկատի ունենք Ֆրիկ, Դիւան, Նիւ Եորք, 1952) մատենագրական հիմնական տարբերակները հնարավոր ամճշտություններից խուսափելու նպատակով:

Նշենք, որ կիլիկյան կանոնարկման շրջանն ակադ. Գ. Ջահուկյանի բնութագրմամբ հնչյունական տեսակետից առանձնանում է հետևյալ յուրահատկություններով. նախ *ֆ* հնչյունի առկայությամբ, ապա ծայնեղների խլացմամբ և խուլերի ծայնեղացմամբ, երկբարբառների պարզեցմամբ՝ *այ>ա, ոյ>ու, եա>ե, իւ>ու* (վերջինս գրվում է ոյ), *իւ-ի՝ դ-ից առաջ ե* կամ *ի* դառնալով, *դ-ի՝* բազմավանկ բառերի սկզբում *վո* հնչվելը, *ու* ծայնավորի՝ *դ-ից առաջ ը* դառնալը, *ե-ի՝* միավանկ բառերի սկզբում և այլ դեպքերում շեշտի տակ *յե* հնչվելը, ծայնեղների՝ *դ-ից* հետ շնչեղ-խուլերի վերածվելը և այլ մասնակի առանձնահատկություններ (Զ-ի անկման հաճախացում, եռավանկ և ավելի վանկով բառերի նախավերջին վանկի *ա-ի* սղում, գրաբարի հնչյունափոխության կանոնների խախտում և այլն) (6, էջ 46), որոնք վկայվել են Ֆրիկի տաղերում՝ ունենալով տարբեր գործառական ընդգրկումներ:

Միջինհայերենյան ծայնավորների հնչյունափոխությունն առավելաբար պայմանավորված էր շեշտափոխությամբ:

Բազմիցս վկայվել է *ա* և *ո* ծայնավորների սղում բազմավանկ բառերում, ինչպես՝ *Ջանցի* թե հանց բան անեմ /ՖրՂ,340/: Գանգատ *ասցին* ի խոր սրտե /ՖրՂ,426/: Զուգեցին *կաղպար* /ՖրՂ,398/: Զոր քրիստոնեայքն ամեն *հաւսար*, Ի յԱստուծոյ կու խնդրէին /ՖրՂ,422/: Այնոր *փոխքէն* զի՞նչ խորհեցար /ՖրՂ, 422/: Կու հրամայէ *հոգոող* անուն /ՖրՂ,427/: Դետ *դարպսին* եմ ես ի շար /ՖրՂ,475/: Ամնահութեան աղբիւրն *առջին* /ՖրՂ,480/: Զաւոռածս ի *թոռմիլ* արեր /ՖրՂ,482/: Շատ մի հոգիք *ժողկել* է նա /ՖրՂ, 325/:

Վկայաբերված, ինչպես և մնացյալ բոլոր օրինակներում հիշյալ ծայնավորների սղումը տեղի է ունեցել միջնավանկում, որը գերազանցապես բնորոշ է եղել կիլիկյան հայերենին և ընդհանրապես միջին հայերենի արևմտյան տարբերակներին, իսկ արևելյան տարբերակներին առավել հատուկ առաջին վանկի *ա*-ի և *ո*-ի սղում ընդհանրապես չի համոզիպում (1, էջ 74-75):

Ա<ե հնչյունափոխությունը, ընդհանուր օրինաչափության չվերածվելով, սահմանափակվել է առանձին բառերի շրջանակով, ինչպես՝ *երեխտաւոր* (ԺՂ., հծհ. 75-76, 1311, Կիլիկիա)*, *յերջեւանց* (ԺՂ., հծհ. 275-76, 1335, Կիլիկիա), *յեմել* (Անս. 25): Ավելի ուշ վկայվել են Աղթամարի, Ոստանի մատենագիր աղբյուրներում (1, էջ 76) ևս:

Առկա օրինակներից ելնելով՝ կարող ենք նշել, որ XII-XIII դդ. հիշյալ հնչյունափոխական երևույթն առավելապես բնորոշ է եղել լեզվի կիլիկյան տարբերակին, իսկ Ֆրիկի տաղերում այն ընդհանրապես չի արձանագրվել:

Միջին հայերենում չընդհանրացած հնչյունափոխական երևույթներից են նաև *ա<ե* և գործիականի *-ամբ* վերջավորության մեջ *ա<օ* (-օմ) փոփոխությունները, որոնք նույնպես Ֆրիկի լեզվում չեն կիրառվել:

Ի դեպ, թեև -օմ հոլովական վերջավորությամբ սակավ օրինակներ են վկայվել, այնուհանդերձ որոշ հետևություններ, այնուամենայնիվ, կարելի է անել. այսպես, հիշյալ ձևության կիրարկումն արձանագրվել է Մխիթար Դերացու և Սմբատ Գունդստաբլի աշխատություններում, որոնցից կարելի է ենթադրել, որ այն առավելաբար բնորոշ է եղել կիլիկյան տարբերակին:

Ու ծայնավորը *դ*-ից առաջ բառասկզբում սղվել կամ հնչյունափոխվել է *ը*-ի (իաճախ՝ գաղտնավանկի) կամ *ռ*-ի, օրինակ, եւ չեմ սիրել *ուղորդ* սրտաց /ՖրՂ,318/: Բանին *դորդմ* ու ծուռն ի Չարխն է կապած /ՖրՂ, 383/: Թե ճշմարիտ

* Համապատասխան զուգահեռ մատենագրական օրինակները մեջբերել ենք համաձայն *Այնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ս, Երևան, 1972թ.* աշխատության:

է բանս և ողորդ՝ այս կենցաղս, որ խաբ կու տայ /ՖրՂ, 297/: Մարդուն երբ Ղալեհն ու բուրջն ի Ֆալաքն չէ ըղորդած /ՖրՂ, 383/:

Հիշյալ հնչյունափոխության դեպքում բառասկզբում նկատելի է /հնչյունի հավելում, որը բարբառային առանձնահատկություն է համարվել և հիմնականում վկայվել է կիլիկյան աղբյուրներում (Յղրկէ պապն յաւգնութիւն Սանր ժմնկ. II, 61, XIIIդ., Կիլիկիա, Գող եւ Ծեծվոր չէ պարտ յղարկել բազվորին, Սմբ. Ղատ. 12, Ի սիրտն յղարկէ, Մխ. Հեր, 46բ), իսկ Ֆրիկի լեզվում եզակի կիրարկում ունի, ինչպես՝ Ամբարծ գիոգոյ աչերդ եւ յղրկէ պաշար զանդէնին /ՖրՂ, 431/:

Եզակի կիրառություն ունեն ինչպես /հ<ե/ (Այն բանին դու պէտ առնես, որ հոգոյդ է պեղծ ու վասն /ՖրՂ, 457/), այնպես էլ ե<ո/ (Ցորեկն հետ մեղաց դատիս /ՖրՂ, 454/) փոփոխությունները, որոնցից առաջինը քեւ արձանագրվել է Աղթամարի (լուսաեղծ<լուսաիղծ, ԺՂ, հծհ.93, 1331, Աղթամար), Կիլիկիայի (ուղեղ<ուղիղ, Սանր. ժմնկ. II, 39, XIII, Կիլիկիա), Վայոց ձորի (Մագեստորոս<Մագիստորոս, Ղիվ. III, Վայոց ձոր, 50, 1283թ.) աղբյուրներում, սակայն առավել հետևողականորեն արտահայտվել է Ա. Ամասիացու «Ուսումն բժշկութեան» հեղինակային ձեռագրում, իսկ երկրորդը, եզրափակվելով մեկ բառով, քերես տարածքային սահմանափակում չի ունեցել:

Առկա է նաև ե>ը, ե>օ հնչյունափոխությունը. իրերաց//իրրաց (Ընկերք են իրրաց /ՖրՂ, 499/), երեսուն//երսուն (երսուն եւ ութ ամ էր նորա /ՖրՂ, 316/), վայելեր//վայլեր (Դեմ չեմ վայլեր /վայելեր/ զայս աստըուրս /ՖրՂ, 475/):

Է ձայնավորը, բառական ուղիղ ձևերում մնալով անփոփոխ, բառաբարդման կամ թեքման ժամանակ հնչյունափոխվում էր /-ի/, ինչպես՝ կէտ//կիտի (Տէր, որ զՅունան տըւեր կիտին /ՖրՂ, 427/), գէշ//գիշու (Գիշուդ պատճառ դու եղար /ՖրՂ, 402/) և այլն:

Ո<ու և ո<ա հնչյունափոխությունները տաղերում եզակի բնույթ ունեն. առաջինը վկայվել է ընդամենը մեկ բառում, ինչպես՝ մինչև որ<ինչուր (Երկու լոյս ի մի դարծաւ ի գիշերին, ինչուր հասուցի /ՖրՂ, 365/), իսկ երկրորդը, առավելապես վերաբերելով անձնական դերանուններին, արտահայտվել է նացմով՝ նա դերանվան գործիական հոլովում, օրինակ, Նացմով զմեղքն քաւեցէք /ՖրՂ, 485/:

Ը (հիմնականում գաղտնավանկ) հնչյունի փոփոխությունը, պայմանավորված հաջորդ վանկի ձայնավորի բնույթով, առնմանությամբ կամ նույնանում, կամ մոտենում էր տվյալ ձայնավորին՝ ըստ արտասանական տեղի, ինչպես՝ գլորեկ<գոլորեկ (Հանց գիտացե՞ր թէ ի Ծերութեանն չի գոլորիս /ՖրՂ, 264/), դրի<դիրի (Պատճառ դիրի դու դեւայ /ՖրՂ, 401) և այլն:

Երկբարբառների հնչյունափոխության օրինակներ բազմիցս վկայվել են. նախ անդրադառնանք *այ* երկբարբառին, որի պատմական փոփոխությունն ի սկզբանե ընթացել է երկու՝ *այ<ա* և *այ<է* հնչյունափոխությամբ. առաջինը ծավալվելով օրինաչափության է վերածվել առավելապես արևմտյան, իսկ երկրորդը՝ արևելյան բարբառներում (1, էջ 91): Ֆրիկի տաղերում թեև հանդիպում է երկրորդ տարբերակը, սակայն առավել հաճախադեպ է առաջին՝ *այ<ա* հնչյունափոխությունը և բառի ուղիղ ձևերում, և բառաբարդման ժամանակ, ինչպես՝ Ի մէկն սիրով հայի, *մէկալին* դէմն խոլորած /ՖրՂ, 387/: Չի հայիլ ի Տեր Աստուած, չի յիշէ զգութն *ալ անի* /ՖրՂ, 493/: Զաղէկն ի յերկիր ի *վար* վտարես, որ ժողովէ կտոր /ՖրՂ, 372/:

Ուշագրավ է, որ տարբեր տաղերում գործածված միևնույն բառը արտահայտվել է հնչյունափոխական տարբեր դրսևորումներով, ինչպես՝ *Հայնց* որ վստահ ի Տերն հայի /ՖրՂ, 290/: Յեզուց ես այլ *հանց* լինենամ /ՖրՂ, 264/: Որդեակ *հենց* բանի պէտ արայ /ՖրԲ, 35/:

Սակավադեպ է *այ<ո* փոփոխությունը, ինչպես՝ *մայրի<մորի*. ի դեպ, համարժեք երկու ձևերը գործածվել են առաջինի գերակայությամբ. Զինչ անպիտան փայտ ի *մայրի*ն չէ՝ շինուածոյ նա պիտանի /ՖրՂ, 289/: Բազան ի յանտառ՝ *մորի*ն, թպէտ բու, թպէտ բազայ /ՖրՂ, 467/:

Վկայվել են մեկական օրինակներ, երբ գործածվել է *այ* երկբարբառը ենթադրելի է հնչյունի փոխարեն, և *յա* հնչյունախումբը սղվել է, ինչպես՝ Յառաջ ինչ *դայո* չէր եղել այս ամէն /ՖրՂ, 398/: Չէ *հրամած* /ՖրՂ, 312/:

Եա երկբարբառը գերզանցապես վերածվել է է հնչյունի մասնավորապես անցյալ դերբայի, անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքի վերջավորության և բուն հրամայականի *եա* վերջավորության դեպքում, ինչպես՝ Ոչ *տառպելի*ի տուեր կապայ /ՖրՂ, 322/: *Շինեց* գերկինքն կամար /ՖրՂ, 396/: Սիրո՛ գաղ երեք բանիկդ /ՖրՂ, 499/:

Իւ երկբարբառը, գրաբարում համեմատաբար կայուն լինելով, միջին հայերենում շեշտազրկվելով հնչյունափոխվում էր, ինչպես՝ դիւրին//դուր (Թէ չար՝ թէ բարի, թէ *դուր*՝ թէ դժար, որ ի յաստնուրս /ՖրՂ, 378/), սակայն հանդիպում է նաև չհնչյունափոխված տարբերակով, ինչպես՝ Զայն կու տայ *իւրեն* ծառային /ՖրՂ, 432/:

Ոյ<ու. միևնույն բառը նույն տաղում գործածվել է գրության տարբեր ձևերով (Երեկ ինձ բեռն եղաւ *գերոյս* /ՖրՂ, 329/: Զաշխարհս յաչիցս ելաւ *գերուս* /ՖրՂ, 329/), որն առավելաբար զրջագրական, քան արտասանական անմիօրինակության արդյունք է:

Բաղաձայնների հնչյունական առանձնահատկությունները քննելիս նախ անդրադառնանք XIII դարի սկզբնաղբյուրներում վկայված *ֆ* հնչյունին, որը

Ֆրիկի Դիւանի տաղերի հիմնական տարբերակներում (բացի իր անունից, որի ծագումը դեռևս վիճելի է), բացառապես հանդես է եկել օտար (մասնավորապես պարսկական) փոխառությունների կազմում, ինչպես *Ֆալաք*, թէ քեզ վատ ասեմ /ՖրՂ,372/: Նախ ու *նասիֆ*, քիմխայ ու *սաւֆ* /ՖրՂ,479/: Լիրք եւ անամաւթ՝ այն շուն *Սաւֆին* /ՖրՂ,425/: *Ֆռանկին* շուն կու ասեմ /ՖրՂ,274/: Շինեմ դարպաս նախշուն *ֆսուս* /ՖրՂ,329/: Դրկէ որդանցն *նաֆաղայ* /ՖրՂ,322/, ի դեպ, հիշյալ հնչյունը հանդիպում է հայատառ պարսկերեն քառատողում՝ Լաշար սիֆաթան /ՖրՂ, 353/:

Ֆրիկի տաղերում դրսևորվել են միջին հայերենի ոչ բոլոր տարբերակներին տիպական *հ<խ* հնչյունափոխության օրինակներ, որոնք հիմնականում բնորոշ են Վասպուրականի և նրան հարող շրջանների խոսվածքներին, ինչպես՝ *Ձնիխարն* ու զվատում, Աստուծոյ զայն երբ զըբընեմ /ՖրՂ,87/: Որպես առ ափն *ջրխորին*, Սամարացուն եղեր գթած /ՖրՂ,74/: Տվյալ երևույթը չընդհանրանալով՝ մասնակիորեն արտահայտվել է հիշյալ երկու օրինակներում, որոնք թերևս կարելի է վերագրել գրիչներին, քանզի մատենագրական տարբերակներում հանդիպում է *նիխար* բառի *նիհար* ձևը /ՖրՂ,354/, իսկ երկրորդ՝ *ջրխոր* բառը, չենք կարող վերջնականապես ստուգել, քանի որ Տիրայր արք. Տեր-Յովհաննիսյանի հավաստմամբ *Ֆրիկի այս տաղը պահուած է միմիայն այս ՁՌ-ի մէջ, միւս բազմաթիւ ՁՌ-ներից եւ ոչ մէկն ունի որեւէ փոփոխակ*՝:

Սիջին հայերենում որոշ գրաբարյան բառեր փոփոխության են ենթարկվել՝ արտահայտվելով հնչյունների հավելմամբ կամ անկմամբ ու դրափոխությամբ, որը մեծապես դրսևորվել է լեզվի խոսակցական տարբերակում:

Սիջին հայերենում տարածված երևույթ էր *ր* հնչյունի անկումը, որը, սակայն, Ֆրիկի տաղերում օրինաչափության չի վերածվել. արձանագրվել է մի քանի օրինակ. *աժնիկ* (Ապա թէ չինիս *աժնիկ* /ՖրՂ,453/), *աժել* (Սա չաժէ ափով մի թրիք /ՖրՂ,114/) և *քաշել* (Չայն ամեն չարչարանքն Յիսուս չէր *քաշէր* /ՖրՂ,245/):

Առավելապես կիլիկյան սկզբնաղբյուրներում վկայված *համանք*, *համել*, *հաւերք* (Տես 1, էջ145-146)՝ *ր*-ի անկմամբ ձևավորված բառերը Ֆրիկի տաղերում հանդիպում են նախնական տարբերակով. Զո *հրամանիդ* ես ոչ անսամ /ՖրՂ,257/: Յուր *հրամայես* ի հաւն կենամ /ՖրՂ,260/: Երբ դժոխոց *հրաւէրն* գայ /ՖրՂ,321/:

* Գրված է «Նորին Ֆրկանն ասացեալ վասն հոգոյ» տաղի տողատակում: Տես Ֆրիկ, Դիւան, էջ 312-320:

7 հնչյունի անկումը բավական հաճախադեպ է, ինչպես՝ Չարիս, ամ քեզ ո՞նց *աւտամ* /ՖրՂ,375/: Գնա՝ ի հուրն *անատակ* /ՖրՂ,366/: Մարդուն երբ ասողեն *չաքողի* /ՖրՂ,290/: *Անկարծակի* ճիւղքն հատաւ (5, էջ 84):

Սակայն, հաճախ նույնիսկ միևնույն տաղերում գործածվել են *հ* (յ) հնչյունով ձևեր, ինչպես՝ Զծովն ի վեր բեր ու *այտնէ*, Զբանքդ *յայտնէ* և պատմէ:

Բառամիջի *հ*-ի կորստով տաղերում հանդիպում է ընդամենը մեկ բառ՝ *պաք*՝ *Պաք* եւ ի աղաւթք խիստ կու կենար /ՖրՂ,480/:

Չափ բառը, նախապես *չափք* ձևով գործածվելով, բառաբարդման ժամանակ, ինչպես և ուղիղ ձևով որոշ բարբառներում գործածվել է *փ* հնչյունի անկմամբ, ինչպես՝ *Չանչաք* վազէ դռնէ ի դուռն, Մինչ չարարին *հանչաք* վնաս /ՖրՂ,425/:

Նկատելի է բառավերջի *ջ* հնչյունի անկում *շուրջ*//*շուռ* բառում, ինչպես՝ *Ի շուռ* կուգամ /ՖրՂ,251/ - Շատ ի *շուրջ* գամ՝ մոլորեն /ՖրՂ,277/:

Առավելապես հանգավորմամբ պայմանավորված՝ տաղերում բազմիցս վկայվել են մասնավորապես բաղաձայն հնչյունների և հնչյունախմբերի անկում, ինչպես՝ Տանի յայն տեղին *կուտէ* /*կուտակէ*/, ուր խաւարն է սառնամանիք /ՖրՂ,349/: Զամէն մէկի մեղք ցուցանեմ, թող զիս անգէտքն քամահեն /քամահրեն/ /ՖրՂ,274/: Ստամոքդ /ստամոքսդ/ արծակ ես դու զուգել /ՖրՂ,305/: Թէ դու յայն *ապով* /ապահովութեամբ/ կենաս, թէ զԱստուած գթած դու գիտես /ՖրՂ,392/: Դարպաս եւ ապարան շինես, գիտես թէ ի ներս *տի* /պիտի/ կենաս /ՖրՂ,456/:

Անդրադառնալով հնչյունների հավելմանը՝ նշենք, որ հիմնականում բնորոշ լինելով խոսակցական լեզվին՝ դարձյալ արծանագրվել է Ֆրիկի տաղերում: Թեև հանդիպում են հնչյունի նախահավելման մի քանի օրինակներ, ինչպես՝ *հանցեղ* (Երթայ դիպնի *հանցեղ* դարի /ՖրՂ,289/), *հանչաք* (Քեզ պարտ է դատել *հանչաք* /ՖրՂ,458/), *յգուց* (Յէգուց Աստուծոյ առջեն քեզ հաւն ծար ի՞նչպես լինենայ /ՖրՂ,337/), սակայն Ֆրիկի լեզվին առավել հատկանշական են միջնավանկի և բառավերջի հավելումները, ինչպես՝ *կանաչ*-*կանանչ* (Ուր ցած է, ինչպէս *կանանչ* /ՖրՂ,468/), *գբաղիլ*-*գմբաղիլ* (Ով կարդայ զայս բաներս եւ ինքն *գմբաղի* /ՖրՂ,449/), *թմրութիւն*-*թմբրութիւն* (Երեստ քեզ *թմբրութեան* /ՖրՂ,181/), *դու*-*դուն* (Կուպատես *դուն* յաւր մի բոլոր /ՖրՂ,376/):

Դրափոխությունն ինչպես արդի բարբառներում, այնպես էլ միջին հայերենում բավական գործուն է եղել, ինչպես՝ Մէջքդ *գծել* ի չար գործոց պոռնկութեամբ խառնակելոյ /ՖրՂ,306/: Նայ մնայ մարմինդ քո *դարտակ* /ՖրՂ,368/: Սպրկիկ քաղհանէ յերակ, մի՛ թողուլ զփուշն ի յատակ /ՖրՂ,369/:

Այսպիսով, նկատի ունենալով առավելաբար ծայնավորների հնչյունափոխական առանձնահատկությունները, կարելի է եզրակացնել, որ թեև Ֆրիկի տաղերում արձանագրվել են կիլիկյան հայերենին և լեզվի արևելյան տարբերակներին մասնահատուկ լեզվական իրողություններ, սակայն առավել գերակա են արևմտյան բարբառներին բնորոշ հնչյունափոխական օրինաչափություններ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հատոր Ա, Երևան, 1972:
2. Լեզվի և ոճի հարցեր, հատոր III, Երևան, 1975:
3. Կարստ Յ., Կիլիկյան հայերենի պատմական քերականություն, Երևան, 2002:
4. Ղազարյան Ս.Ղ., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1954:
5. Սնացականյան Ա., Ֆրիկի մի նորահայտ բանաստեղծություն, Առանձնատիպ ՀՍՍՐ Գիտությունների ակադեմիայի, 1948թ., N2-3, Տեղեկագիրք:
6. Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969:
7. Ֆրիկ, Դիան, Նիւ Եորք, 1952:

Համառոտագրությունների ցանկ

1. *Անս* - Անսիզ Անտիոքայ, Վենետիկ, 1876:
2. *Դիվ. III* - Դիվան հայ վիմագրության, պրակ III, կազմեց Ս. Գ. Բարխուդարյանը, Երևան, 1967:
3. *ԺԴ հծհ* - ԺԴ դարի հայարեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ.Ս. Խաչիկյան, Երևան, 1950:
4. *Մանր ժմնկ. II* - Մանր ժամանակագրություններ XII-XVIII դդ., հատոր I, Երևան, 1951:
5. *Սխ. Դեր*-Սխիթար Դերացի, Ջերմանց մխիթարութիւն, ձեռ. 416, գրչ.թիվ, 1279:
6. *Սմբ. Դատ.* - Սմբատ Սպարապետ Դատաստանագիրք, հավաքական տեքստը, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Գալստյանի, Երևան, 1958:
7. *ՖրԴ* - Ֆրիկ, Դիան, Նիւ Եորք, 1952:
8. *ՖրԲ* - Ֆրիկ, Բանաստեղծություններ, 1941: